ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N29-03- 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» «02» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Արզուման Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11002. Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ» միջոցառման շրջանակներում «www.antitrafficing.am կայքի պահպանում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.4.-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված ծառայություններն ու գործառույթները (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել և ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն

պայմանագրի 6.4.-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5.-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախախտեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկված գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4.-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություններ կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1.-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումներով արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով հաստատված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և

ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (Հավելված N 1-ով սահմանված նպատակի, ակնկալվող արդյունքների, ոչ ֆինանսական ցուցանիշների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1.-ի կետի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1.-ին կետով նախատեսված միջոցառումները՝ ՀՀ օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն,

2.4.5. պետական մարմնի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները,

2.4.6. պայմանագրից բխող միջոցառումներն իրականացնել՝ ապահովելով պայմանագրի պարտադիր պահանջները,

2.4.7. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.9. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.10. միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.12. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.13. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ): Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.14. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով նախատեսված կարգի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով, իսկ բովանդակային հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված N 1-ի:

2.4.15. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.16. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.17. ավարտված միջոցառումների փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմնին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.18. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.19. եթե իրականացվող ծրագիրը ենթակա չէ ավելացված արժեքով հարկի հարկման կամ ենթակա է հարկման պետական բյուջեից ավելացված արժեքի հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա վերը նշված հարկատեսակի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները ծրագրի իրականացման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.4.20. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.21. չծախսված գումարի վերջնական տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1.-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է վճարում 4212.0 (չորս միլիոն երկու հարյուր տասներկու հազար) հազար դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1.-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 3-ի՝ վճարման ժամանակացույցի:

3.3. Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.4. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1.-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.5. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1.-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով կազմակերպությունը պետական մարմնին ներկայացնում է ֆինանսական հաշվետվություն, ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ ամփոփ բովանդակային հաշվետվությունը՝ մինչև 2025 թվականի հունվարի 10-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1.-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրի 1.1.-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ

տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ սույն պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.6. Սույն պայմանագրի 6.4.-րդ և 6.5.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության	«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա»
կրթության, գիտության, մշակույթի և	հասարակական կազմակերպություն
սպորտի նախարարություն	ք. Երևան, Փափազյան 23/1, բն.42
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1930001245550200
Հ/Հ 900011032670	ՀՎՀՀ 00051617
ՀՎՀՀ 02698732	Էլ. փոստ՝ audio.visual@yahoo.com
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Հ. Հակոբյան	Ա. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«29» «02» 2024 թ.
N ԵԴ- 03- 2024 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«antitraffcking.am կայքի պահպանում և թարմացում»

1.	Կազմակերպության անվանում	«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ
2.	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Օրբելի 4, բն. 23
3.	Ծրագրի անվանում	«antitraffcking.am կայքի պահպանում և թարմացում»
3.1	Բովանդակություն	www.antitrafficking.am կայքէջն իրենից ներկայացնում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միակ հայալեզու, ժամանակակից հարթակ, որը դարձել է ՀՀ կառավարության թրաֆիքինգի դեմ պայքարի խորհրդի ոչ պաշտոնական կայքը: Որպես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետ գործիք՝ կայքը դարձել է տեղեկատվական, փորձագիտական, ուսումնական նյութերի ռեսուրս հարթակ՝ լրագրողների, ուսանողների, միջազգային փորձագետների համար: Մեծ է կայքէջի դերը նաև ԶԼՄ-ների կողմից մարդկանց թրաֆիքինգի ճիշտ լուսաբանման հարցերում:
3.2	Նպատակ	Պարբերաբար թարմացվող տեղեկատվության, սոցիալական հոլովակների և թիրախային ակցիաների շնորհիվ կայքէջը դարձել է հասարակության՝ հատկապես երիտասարդության իրազեկման բարձրացման և կանխարգելման լավագույն գործիքներից մեկը:
3.3	Անցկացման ժամկետ	03.01.2024-30.12.2024
3.4	Անցկացման վայր	Հայաստանի Հանրապետություն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ծրագրի իրականացման համար նախատեսված թարմացումները և նյութերը հնարավորություն կտան օգտատերերին միշտ տեղեկացված և իրազեկ լինել աշխարհում և Հայաստանում մարդկանց թրաֆիքնգի մարտահրավերներին, նպաստել

		կանխարգելմանն ու պայքարին: Ինչպես նաև այն աջակցություններին, որոնք նախատեսված են թրաֆիքինգի զոհերի համար: Երիտասարդները, որոնք լինելով կայքի հիմնական օգտատերեր՝ փաստացի ընդգրկված կլինեն ծրագրում և կայքի ոչ ֆորմալ ուսուցման շնորհիվ կկարողանան նախ և առաջ լիարժեք տեղեկացված լինել մարդկանց թրաֆիքինգի մասին, ինչպես նաև դրա կանխարգելմանը և աջակցության տրամադրմանը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Որպես գնահատման չափորոշիչներ կլինեն՝ - Թարմացված նյութերի քանակ (կայքի 15 բաժիններում, երկու լեզուներով) – 80, այդ թվում՝ 20 սեփական աղբյուրներից, 60 այլ աղբյուրներից - Օգտատերերի քանակ-400 - Այցելությունների քանակ-մինչև 6000 ՀՀ-ից

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա»
Ք. Երևան, Փափազյան 23/1, բն,42
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930001245550200, ՀՎՀՀ 00051617
audio.vizual@yahoo.com
Նախագահ՝
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«29» «02» 2024 թ.
N ԵԴ-03-2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«www.antitrafficking.am կայքէջի պահպանում և թարմացում» ծրագրի իրականացման ծախսերի 2024 թ.

№	Ծախսատեսակի անվանումը	Չափման միավորը	Միավորի քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ՝ ներառյալ հարկերը***				
1.1	Ծրագրի ղեկավար / կայքի համակարգող	ամիս	12	90.0	1080.0
1.2	Կայքի լրագրող	ամիս	12	70.0	840.0
	Ընդամենը 1				**1920.0**
2	**Այլ ծառայություններ**				
2.1	Գրասենյակային տարածքի վարձակալություն	ամիս	12	66.0	792.0
2.2	Հաշվապահական ծառայություն	ամիս	12	60.0	720.0
2.3	Հեռախոսակապի ծառայություն	ամիս	12	5.5	66.0
2.4	Դոմեյնի ձեռքբերման ծառայություն	հատ	1	12.0	12.0
	Ընդամենը 2				**1590.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**3510.0**
	ԱԱՀ**				**702.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**4212.0**

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան (ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աուդիո վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ
ք. Երևան, Փափազյան 23/1, բն. 42
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/Հ՝
00051930001245550200, ՀՎՀՀ՝ 00051617
էլ. փոստ՝ audio.visual@yahoo.com
Նախագահ՝

_____ Ա. Հարությունյան (ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«29» «02» 2024 թ.
N ԵԴ-03-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ (Հազար դրամ)

Ծրագիր 1115	Միջոցառում 11002	Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900	0.0	561.6	**842.4**	1193.4	1544.4	**1895.4**	2246.4	2597.4	**2948.4**	3369.6	3790.8	**4212.0**	**4212.0**
Ընդամենը		0.0	561.6	**842.4**	1193.4	1544.4	**1895.4**	2246.4	2597.4	**2948.4**	3369.6	3790.8	**4212.0**	**4212.0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հայաստանի Հանրապետության
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Աուդիո-Վիզուալ լրագրողների
ք. Երևան, Փափազյան 23/1, բն.42
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930001245550200
ՀՎՀՀ 00051617
Էլ. փոստ՝ audio.visual@yahoo.com

Նախագահ

Ա. Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ.